# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 1(18/19)

## Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտիտական խորհրդի 17.09.18թ.կայացած նիստի

Խորհրդի նիստին մասնակցում էին նրա 36 անդամներից 21 -ը (ցուցակը կցվում է):

Օրակարգ՝

1. **Ֆակուլտետի գիտ. խորհրդի 2018/2019 ուս.տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկումը և հաստատումը:**

   ***Զեկ.՝ Հ.Ա. Շահինյան***
2. **Տեղեկատվություն 2018/2019 ուս.տարում ֆակուլտետի բակալավրիատի ու մագիստրատուրայի համալրման մասին:**

   ***Զեկ.՝ պրոֆ., Խ.Վ. Ներկարարյան***
3. **2018/19 ուս.տարվա 1-ին կիսամյակի ֆակուլտետի անվանական կրթաթոշակների թեկնածությունների հարցը:**

   ***Զեկ.՝ պրոֆ., Խ.Վ. Ներկարարյան***
4. **Ընթացիկ հարցեր:**

*Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ..*

***Լսեցին-*** Ֆակուլտետի գիտ. խորհրդի 2018/2019 ուս.տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկումը և հաստատումը։

***Արտատայտվեցին.-*** Տեղի ունեցավ քննարկում, որին մասնակցեցին ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ. Վ. Ներկարարյանը, պրոֆեսոր Գ.Ս.Հաջյանը։

***Որոշեցին.-*** Նախագծում հաշվի առնել կատարված առաջարկները և հաստատել աշխատանքային պլանը։

*Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ..*

***Լսեցին-*** Ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ. Վ. Ներկարարյանի տեղեկատվությունը 2018/2019 ուս.տարում ֆակուլտետի համալրման մասին։ Զեկուցողը բերեց թվային տվյալներ ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի

ընդունելությունների վերաբերյալ բոլոր մասնագիտություններով և մասնագիտացումներով:

***Արտատայտվեցին.-*** պրոֆեսորներ Խ.Վ. Ներկարարյանը, Յու.Հ. Ավետիսյանը և Գ.Ս. Հաջյանը:

***Որոշեցին.-*** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

*Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ.*

***Լսեցին*** **-** ֆակուլտետի 2018/19 ուս.տարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակների թեկնածությունների առաջադրման հարցը:

***Արտահայտվեցին*** **-** ֆակուլտետի դեկան, ֆ.մ.գ.դ. պրոֆեսոր Խ.Վ.Ներկարարյանը, ԱՊՏՖ ամբիոնի պրոֆեսոր Գ.Ս. Հաջյանը, Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պրոֆեսոր Կ. Ղամբարյանը:

***Որոշեցին*** **-** Հաշվի առնելով ուսման գերազանց առաջադիմությունը և գիտահասարակական ակտիվությունը՝ անվանական կրթաթոշակների թափուր տեղերը հատկացնել հետևյալ ուսանողներին.

<u>Էմիլ Միրզաբեկյանի անվան կրթաթոշակ</u>

1. **Հովհաննիսյան Տիգրան Նաիրիի – բակալավրիատ, 3-րդ կուրս**

<u>Ալիխանյան եղբայրների անվան կրթաթոշակ</u>

2. **Հունանյան Արեգ Աշոտի- մագիստրատուրա, 2-րդ կուրս**

<u>Յուրի Բախշյանի անվան կրթաթոշակ</u>

3. **Հինդոյան Գևորգ Անդրանիկի- բակալավրիատ, 4-րդ կուրս**

<u>Յակոբ Զարոբյանի անվան կրթաթոշակ</u>

4. **Մինասյան Բիլլի Ժան-Լուիի – մագիստրատուրա, 2-րդ կուրս**

*Օրակարգի ընթացիկ հարցերում*

*Լսեցին-* - Ե.27.01 "Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա" մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ ***Նարեկ Էդուարդի Մամիկոնյանի*** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

*Որոշեցին-* 1) ասպիրանտ ***Նարեկ Մամիկոնյանի*** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ "**Ինքնաուսուցվող ինտեգրալ դինամիկ հիշասարքերի նախագծման միջոցների մշակումը և հետազոտումը**":

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել, Սինոփսիս Արմենիա ՓԲԸ ուսումնական դեպարտամենտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տ.գ.դ., պրոֆեսոր **Վ.Շ. Մելիքյանին**:

*Լսեցին-* - Ա. 04.03- "Ռադիոֆիզիկա" մասնագիտությամբ, ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ ***Հենրիկ Աշոտի Պարսամյանի*** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

*Որոշեցին-* 1) ասպիրանտ ***Հենրիկ Պարսամյանի*** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ ***«Գլանային համաչափությամբ միկրոռեզոնատորների առանձնահատկություններն ու կիրառությունները»:***

2) Ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել "ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության" ամբիոնի պրոֆեսոր, ֆ.մ.գ.դ. **Խ.Վ. Ներկարարյանին:**

***Օրակարգը սպառված է:***

***Գիտական խորհրդի նախագահ,***
***պրոֆեսոր՝*** ***Խ. Վ. Ներկարարյան***

***Գիտքարտուղար,*** ***Հ.Ա. Շահինյան***